# Լ Ր Ա Ց Ու Ց Ի Չ Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստ (N 5)**

22 ապրիլի 2011թ. ժամը $15^{00}$

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի գյուղի գազաֆիկացում» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանային գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագրի մասին:
(Նաիրա Բաղդասարյան)

5. Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկներին հումանիտար օգնություն» ծրագրի մասին:
(Վիգեն Խաչատրյան)

**6. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին**
(Ա. Բարխուդարյան)

6.1 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.2 «Հայաստանի թենիսի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման մասին (N 3):

6.4 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման մասին (N 4):



6.5 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման մասին (N 5):

6.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 21-ի N Մ-001-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ):

6.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ):

6.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ (N 1):

6.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ):

**7. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Ա. Բարխուդարյան)

7.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն (N 1):

7.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն (N 2):

**8. Այլ հարցեր**

8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների և մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 1-ի N Մ-189-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ):

8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-109-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Մատենադարան» հիմնադրամ):

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի N Մ - -Ա Հր.5/1
քաղ. Երևան

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԾՆԻ ԳՅՈՒՂԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N 01/ -11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի -ի N -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 30429200 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի գյուղի գազաֆիկացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի «Տրանսգազշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00057054) 2011 թվականի ապրիլի 5-ին կնքված N ՀՀ/ԱԳ-1/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազաֆիկացման շինարարական աշխատանքների իրականացում՝ 29950000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2011 թվականի ապրիլի 5-ին կնքված N ՀՀ-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության իրականացում՝ 179700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մոդոռննապագիծ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00080732) 2011 թվականի ապրիլի 5-ին կնքված N ՀՀՏՀ-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության իրականացում՝ 299500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3 «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
...ա Վարդանյան
«13» ապրիլի 2011թ.

Հր.5/1

### « ՀՀ Լոռու մարզի Արծնի գյուղի գազիֆիկացում »
### ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Լուծել ՀՀ Լոռու մարզի Արծնի գյուղի գազամատակարարման խնդիրը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Յայաստան» համահայկական հիմնադրամ (ՅՅ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՅՎՅՅ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՅՅ Լոռու մարզ, Արծնի գյուղ, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 30.429.200,00 ՅՅ դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՅՅ Լոռու մարզի Արծնի գյուղի համայնքը |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ ապրիլի 05 -ից մինչեւ 2011թ. օգոստոսի 05-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՅԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ-ի կողմից ՅՅ Լոռու մարզի Արծնի գյուղի գազիֆիկացում՝ 29.950.000,00 դրամ առանց ԱԱՅ-ի:<br><br>«ՅԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից հեղինակային հսկողություն՝ 179.700,00 ՅՅ դրամ առանց ԱԱՅ-ի:<br><br>«Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական հսկողություն՝ 299.500,00 ՅՅ դրամ առանց ԱԱՅ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Յամագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Լոռու մարզպետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՅՅ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝ Արմինա Դարբինյանը

Հր.5/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

մր. 5/1

19.04.11 № 3/38-1/77728-11

Ձեր № ______________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 13.04.11թ. N 15/15.1/5741-11 գրության՝ կապված <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<ՀՀ Լոռու մարզի Արծնի գյուղի գազաֆիկացում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/11271-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

մր. 5/1

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ press@moj.am*

01/2274-11
19.04.11

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի
13-ի 15/15.1/5741-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի գյուղի գազաֆիկացում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

035/11211-11

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Մկրտչյան, հեռ. 380-227**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ձր. 5/1

044/3-4/2301-11
18.04.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.04.2011թ. թիվ 15/15.1/5741-11 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի գյուղի գազաֆիկացում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/11179-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1
4-61-92
Fax 2-28-77

ձր. 5/1

թիվ 101/104.3/1935-11
«18» 04 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 13.04.2011թ. թիվ 15/15.1/5741-11 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Դրական եմ վերաբերվում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի գյուղի գազաֆիկացում» ծրագրին:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

114/11076-11

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի N Մ - - Ա

քաղ. Երևան

N 5/2

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԲԸ-Ի ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N 01/ -11, Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի -ի N 01/ -11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի -ի N -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1309200 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի ապրիլի 12-ին կնքված N ՀՀ-Կ-10/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 1309200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«15» ապրիլի 2011թ.

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մասամբ ապահովել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ն անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, առողջապահության բնագավառ |

N 5/2

2

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.309.200,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ն |
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ. ապրիլի 12-ից մինչեւ 2011թ.հուլիսի 12-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ-Կ-10/11 Պայմանագրի Հավելված թիվ1-ի համաձայն գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.309.200,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Առողջապահության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

N 5/2

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
### ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Հր. 5/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.04.11 № 3/3.8-1/7?846-11

Ձեր № ______________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 15.04.11թ. N 15/15.1/5918-11 գրության՝ կապված <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/11502-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հր. 5/2

*0078 Երևան, Հալաբյան 41ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ press@moj.am*

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

01/2308-11
20.04.11

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի**
**15-ի 15/15.1/5918-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

035/11336-11

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,**
**Ա. Մկրտչյան, հեռ. 380-227**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ձր․5/2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

20.04.11 N ՀԶ/22/3167-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.04.2011թ. թիվ 15/15.1/5918-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ [signature] Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/11355-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ձր․5/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱՊ/3-4/2304-11
18.04.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.04.2011թ. թիվ 15/15.1/5918-11 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

[signature] Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/11176-11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

5/2

« 21 » 04 2011թ.
N: 01/1815-11

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 15.04.2011թ.

թիվ՝ 15/15.1/5918-11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» որոշման նախագիծը:

Ձենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝ Ա.ԳԻՁԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

116/11563-11

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի N Մ - - Ա

ք. 5/3

քաղ. Երևան

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N 01/ -11, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011 թվականի -ի N. -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 25365380 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00069233) 2011 թվականի հունվարի 26-ին կնքված N ԳՏ-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջնորդության վարձավճար՝ 2468281 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և ապրանքի փոխադրման արժեքը մաքսային կետից մինչև քաղաք Իջևան՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ ձեռքբերված գյուղտեխնիկան ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) շարքացան-խոտհնձիչ BM12, 1 տեղ, 700 կգ ընդհանուր քաշով, 3000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 1697 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ.

2) տրակտոր «Բելառուս-320.4» (2 հատ) և կուլտիվատոր, 3 տեղ, 3357 կգ ընդհանուր քաշով, 736545 ռուսական ռուբլի արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 172942 ռուսական ռուբլի, ՄՃՓ ՏՄ.

3) գութան PLN-3-35P, 6 տեղ, 450 կգ ընդհանուր քաշով, 1212.70 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 818 ԱՄՆ-ի դոլար, ՄՃՓ ՏՄ.

4) տրակտոր «Բելառուս-82.1», 13 տեղ, 4165 կգ ընդհանուր քաշով, 455510 ռուսական ռուբլի արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 214958 ռուսական ռուբլի, ՄՃՓ ՏՄ.:

4. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյան

«20» ապրիլի 2011թ.

# «ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Տավուշի մարզի գյուղատնտեսության զարգացմանը նպաստելու նպատակով ներմուծել և «Հիմնատավուշ» նորաստեղծ բարեգործական հիմնադրամին անհատույց հանձնել գյուղտեխնիկա, որը կտրամադրվի սահմանամերձ գյուղերի համայնքներին անվճար հիմունքներով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, սահմանամերձ 14 գյուղեր, գյուղատնտեսության բնագավառ |

2

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է՝ 25.365.380,00 ՀՀ դրամ |
| 6. | Բարեգործություն ստացողը | Ակնաղբյուր, Այգեհովիտ, Խաշթառակ, Լուսահովիտ, Լուսաձոր, Գետահովիտ, Դիտավան, Սարիգյուղ, Կայան, Բերքաբեր, Ներքին Ծաղկավան, Կայան, Վազաշեն, Ազատամուտ սահմանամերձ գյուղերի համայնքները |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հունվարի 26-ից մինչեւ 2011թ.հունիսի 26-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «GALOPER» ՍՊԸ-ի կողմից գյուղտեխնիկայի ձեռքբերում և փոխադրում մինչև Բագրատաշենի մաքսակետ՝<br>- շարքացան՝ 3.250,00 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ: Փոխադրման ծախսերը՝ 533.600,00 ՀՀ դրամ: (ակնկալում ենք մաքսային արտոնություններ)<br>- «Բելարուս» տրակտոր և կուլտիվատոր՝ 736.545,00 Ռուսական ռուբլու համարժեք դրամ: Գութան՝ 1.212,70 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ: «Բելարուս» տրակտոր՝ 455.510,00 Ռուսական ռուբլու համարժեք դրամ: |

3

| | | |
|---|---|---|
| | | Փոխադրման ծախսերը՝ 14.500,00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: (ակնկալում ենք մաքսային արտոնություններ)<br>Վերոնշված ապրանքների փոխադրումը Բագրատաշեն մաքսային կետից մինչև ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան՝ 500.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ)<br>Ծառայությունների վարձավճար՝ 2.468.281,00 ՀՀ դրամ (ակնկալում ենք հարկային արտոնություններ) |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝ Արմինե Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

5/3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

20.04.11 № 3/3.8-2/77798-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.04.2011թ. N15/15.1/5696-11 գրությամբ ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

ուսումնասիրելով որոշման նախագծին կից ներկայացված փաստաթղթերը՝ պարզ է դառնում, որ

- «Հայաստան» համահայկական հիմնադրամի և «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի միջև 26.01.2011թ. կնքված N ԳՏ-01/11 պայմանագրում ագրոտեխնիկայի ձեռքբերման, փոխադրման և այդ ծառայության մատուցման գործարքի գինը կազմում է 24.609.200 ՀՀ դրամ, մինչդեռ որոշման նախագծի 1-ին կետում և ներկայացված ծրագրում նշված է 25.992.772 ՀՀ դրամ (ըստ բեռնամաքսային հայտարարագրերի փաստացի ներմուծվել է 25.992.772 ՀՀ դրամ ագրոտեխնիկա): Նույն պայմանագրով նախատեսվում է նշված գումարի շրջանակներում ներմուծել 6 միավոր տեխնիկա, իսկ որոշման նախագծից երևում է ընդամենը 5 միավոր տեխնիկա՝ այդ նույն գումարի սահմաններում: Ընդ որում կից փաստաթղթերում ներկայացված չէ պայմանագրի որևէ փոփոխություն, կամ լրացում, որով կկարգավորվեր վերը նշված հարցը,

034/11394-11

5/3

- կից ներկայացված ծրագրում պարզաբանված չէ համայնքներին հատկացվող ագրոտեխնիկայի օգտագործման կարգը և սկզբունքը՝ ծառայությունները մատուցվելու են վճարովի, թե անվճար հիմունքներով, ինչպես նաև նշված չէ, թե ներմուծվող բեռները ում են հատկացվելու և ում հաշվեկշռում է հաշվառվելու ստացված տեխնիկան:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա.5/3

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ press@moj.am*

01/2273-11
19.04.11

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի**
**13-ի 15/15.1/5696-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

035/11210-11

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Մկրտչյան, հեռ. 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա.5/3

0010, Երևան-10, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 3

Հեռ./Ֆաքս (374 10) 524-641
Էլ. փոստ. frdmoa@agrounit.am

*Ի պատասխան Ձեր* ———— N ————   15.04.11 N ԱՎ/04.1/1798-11

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 13.04.2011թ.
N 15/15.1/5696-11 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի <Հայաստան> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանային գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում> ծրագրի մասին> որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ագրովերամշակման և սննդամթերքի
անվտանգության վարչություն
235471

032/10898-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ձր. 5/3

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

ԹԱԿ/3-6/2219-11
14.04.15

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. ապրիլի 13-ի համար 15/15.1/5696-11 գրությամբ կարծիքի ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

044/10788-11

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՏԱՎՈՒՇԻ**
**ՄԱՐԶՊԵՏ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

ձր. 5/3

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г, Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս՝ /факс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am **Կայք** *WEB* http://tavush.region.am

01/21.1/1532-11
21.04.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 13.04.2011թ. թիվ 2/1873-11 գրության ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագիրը բարեգործական որակելու մասին, ՀՀ կառավարության որոշման նախագծը քննարկվել է Տավուշի մարզպետարանում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և արժանացել հավանության:

Որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Կատարող Գ. Հարությունյան
Հեռախոս 0263 3 45-61

119/11518-11

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ար.5/3

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան «12» ապրիլի 2011թ.

«Հայաստան» համահայկական հիմնադրամ», այսուհետև՝ Հանձնարարող, ի դեմս գործադիր տնօրեն Արա Վարդանյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ն, այսուհետև՝ Հանձնակատար, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Մ. Մարտիրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հիմք ընդունելով կողմերի միջև 26.01.2011թ. թիվ ԳՏ-01/11 ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 2-րդ կետի 2.3 ենթակետի դրույթները՝ կողմերը համաձայնվում են, որ.

- Համապատասխան վերահաշվարկ կատարելուց հետո՝ վերը նշված պայմանագրի 2-րդ կետի 2.1 ենթակետը շարադրել համապատասխանաբար հետևյալ խմբագրությամբ.
  «2.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ 25.365.380,00 (Քսանհինգ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից՝
  ա.) սույն պայմանագրում հավելված թիվ 1.1-ում նշված ագրոտեխնիկայի ձեռք բերման արժեքը արտադրող գործարաններից կազմում է՝ 16.577.836,00 (Տասնվեց միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ,առանց ԱԱՀ-ի,
  բ.) ապրանքի փոխադրման արժեքը արտադրող գործարաններից մինչև Հայաստանի Հանրապետության Բագրատաշեն մաքսային կետ կազմում է՝ 5.819.263,00 (Հինգ միլիոն յոթ հարյուր տասնինը հազար երկու հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:
  գ.) ապրանքի փոխադրման արժեքը Հայաստանի Հանրապետության Բագրատաշեն մաքսային կետից մինչև Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ ք. Իջևան կազմում է՝ 500.000,00 (Հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:
  դ.) Հանձնակատարի վարձավճարը կազմում է՝ 2.468.281,00 (Երկու միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար երկու հարյուր ութսունմեկ ) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:»
- Չեղյալ համարել 2011թ. հունվարի 26-ին թիվ ԳՏ-01/11 ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ թիվ 1 հավելվածը՝ հաստատելով փոփոխված նոր հավելված (Հավելված թիվ 1.1 );

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 26.01.2011թ. թիվ ԳՏ-01/11 ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ անբաժանելի մասը;
3. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

*Կողմերի իրավաբանական հասցեները*

*«Հանձնարարող»*

«Հայաստան» համահայկական հիմնադրամ
ՀՀ ք. Երևան Կառավարական 3-րդ մասնաշենք
Հայաստանի Կենտրոնական բանկ
Հ/Հ 103003215672
ՀՎՀՀ 02507456

Արա Վարդանյան
Գործադիր տնօրեն

ստորագրություն կ.տ.

*«Հանձնակատար»*

«ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տիգրանյան 1 փակուղի
«Արդշինինվեստբանկ» Արաբկիրի մասնաճյուղ
Հ/Հ 247120049041
ՀՎՀՀ 00069233

Մ. Մարտիրոսյան
Գլխավոր տնօրեն

ստորագրություն կ.տ.





Ար.5/3

## ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԹԻՎ ԳՏ-01/11 ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

*թիվ 1.1 հավելված*

| | Անվանումը | Քանակ | Միավորի ձեռք բերման գին արտադրող գործարանից ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի | Միավորի փոխադրման գինը գործարանից մինչև ՀՀ Բագրատաշեն մաքսային կետ, առանց ԱԱՀ-ի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Տրակտոր Беларус 82.1 | 1 հատ | 5.771.312,00 | 1.663.321,00 | 7.434.632,00 |
| 2. | Տրակտոր Беларус 320.4 | 2 հատ | 4.470.795,00 | 1.626.358,00 | 12.194.306,00 |
| 3. | Խոտհնձիչ КНС-1,7 | 1 հատ | 228.395,00 | 184.813,00 | 413.209,00 |
| 4. | Գութան ПЛН-3-35П | 1 հատ | 442.066,00 | 184.813,00 | 626.879,00 |
| 5. | Շարքացան BM 12 | 1 հատ | 1.194.473,00 | 533.600,00 | 1.728.073,00 |
| 6. | Վերը նշված ապրանքների փոխադրման գինը ՀՀ Բագրատաշեն մաքսային կետից մինչև ք. Երևան -ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան, առանց ԱԱՀ-ի | | | | 500.000,00 |
| 7. | Վարձավճար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի | | | | 2.468.281,00 |
| | Ընդամենը | | | | 25.365.380,00 |

*Ընդամենը՝ 25.365.380,00 (Քսանհինգ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:*

*«Հանձնարարող»*

«Հայաստան» համահայկական հիմնադրամ
ՀՀ ք. Երևան Կառավարական 3-րդ մասնաշենք
Հայաստանի Կենտրոնական բանկ
Հ/Հ 103003215672
ՀՎՀՀ 02507456

Արա Վարդանյան
Գործադիր տնօրեն

ստորագրություն կ.տ.

*«Հանձնակատար»*

«ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տիգրանյան 1 փակուղի
«Արդշինինվեստբանկ» Արաբկիրի մասնաճյուղ
Հ/Հ 247120049041
ՀՎՀՀ 00069233

Մ. Մարտիրոսյան
Գլխավոր տնօրեն

ստորագրություն կ.տ.

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 20.04.11, N 3/3.8-2/77798-11 | |
| 1. «Գալոպեր» ՍՊԸ-ի հետ պայմանագրի գումարը չի համապատասխանում նախագծում նշվածին<br>2. Նշված է 5 միավոր տեխնիկա ներմուծված 6-ի փոխարեն<br>3. Ներկայացված ծրագրում նշված չէ, թե ինչ հիմունքներով է տրապադրվելու գյուղտեխնիկան | 1. Ներկայացված է լրացուցիչ կնքված համաձայնագիրը փոփոխված գումարով<br>2. Կատարված է համապատասխան ուղղում<br>3. Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |

Լր.5/3

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Լր.5/4

ապրիլի 2011 թվականի N Մ-    -Ա
քաղ. Երևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-1/77026-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի ապրիլի 5-ի N 01/1980-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի ապրիլի 4-ի N ՀՔ/22/2577-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի ապրիլիի 18-ի N 03/07-1/3777-11, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2011 թվականի մարտի 31-ի N 7/02.3/577-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության 2011 թվականի ապրիլի 4-ի N 11/184, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N 02-Մ-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-6/1741-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող 17000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ Գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի

Լր.5/4

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԿԳՆ Բժշկակենսաբանական Միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն ՊՈԱԿ-ի
տնօրեն Գ. Հայրապետյանի կողմից
«06» ապրիլի 2011թ

# ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կազմակերպել գիտական համաժողով «Միկրոալիքների ոչ-թերմալ կենսաբանական ազդեցության մեխանիզմները և դոզիմետրիան» վերնագրով, որի իրականացման շրջանակներում նախատեսվում է անցկացնել տարածաշրջանային գործնական մեթոդական ուսուցման դասընթացներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ Կառավարության 2003թ. Հունվարի 16-ին N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի «Բ» ենթակետով նախատեսվող հարկային և մաքսային արտոնությունների ստացում: |
| 3. | Բարեգործը | 1/ Տիեզերքի Ուսումնասիրման և Զարգացման Եվրոպական Գրասենյակ (EUROPEAN OFFICE OF AEROSPACE RESEARCH AND DEVELOPMENT (EOARD), UNIT 4515 Box 14, APO AE 09421 USA, WENDY HARISON (FA 86 55-10-1-5039)),<br>2/ Ծովային Ուսումնասիրման Գրասենյակի Նավատորմային Դեպարտամենտ (DEPARTAMENT OF THE NAVY Office of Naval Research Global (ONRG) 86 Blenheim Crescent Ruilip, MIDDX, HA4 7HB, UK (N6209-11-1-1018)) |
| 4. | Ծրագրի կատարողը | ՀՀ ԿԳՆ «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ, Ավան, Աճառյան 31, ՀՎՀՀ 00008887 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Երևան, գիտական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 17.000 ԱՄՆ դոլար, որից 7.000 ԱՄՆ դոլարը տրամադրվել է Տիեզերքի Ուսումնասիրման և Զարգացման Եվրոպական Գրասենյակի (EOARD), իսկ 10.000 ԱՄՆ դոլարը՝ Ծովային Ուսումնասիրման Գրասենյակի Նավատորմային Դեպարտամենտի (ONRG) կողմից |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գիտական հանրություն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01/03/2011 – 01/12/2011 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների | Նախատեսվում է կազմակերպել գիտական համաժողով մայիս ամսին, որի ֆինանսական ծավալը կազմում է 10515 ԱՄՆ դոլար, որը կվերաբաշխվի ստորև բերված նպատակներով՝<br>ա/ հյուրանոցային ծախսեր, բ/ ճանապարհային ծախսեր, գ/ գիտաժողովի իրականացման վայրի վարձակալում: |

2

| | | |
|---|---|---|
| | ծավալը | Համաժողովի շրջանակներում կկազմակերպվի նաև երիտասարդ գիտնականների գործնական դասընթաց, որի նպատակով էլ նախատեսվում է իրականացնել բեռի ներմուծում՝ երկու խմբաքանակով:<br>ա/ առաջին խմբաքանակի ֆինանսական ծավալը կազմում է 761,3 Եվրո,<br>բ/ երկրորդ խմբաքանակի ֆինանսական ծավալը կազմում է 5411 ԱՄՆ դոլար: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1/ Բեռի առաջին խմբաքանակն իր մեջ ներառում է՝<br>ա/ Էրիթրոզին Բ - Erythrosin B, բ/ Ֆուռա-2-ԱՄ - Fura-2-AM, գ/ Ծովաբողկի Պերօքսիդազ - Peroxidase from Horseradish: Առաջին խմբաքանակի ֆինանսական ծավալը կազմում է 761,3 Եվրո,<br>2/ երկրորդ խմբաքանակն իր մեջ ներառում է՝<br>ա/ Թիմիդին - Thymidine, [6-3H]- 5mCi (185MBq), բ/ Օուաբաին - Ouabain, [3H(G)]-, 1mCi (37MBq), գ/ Կալցիում-45 – Calcium-45 Radionuclide, 10mCi (370MBq): Երկրորդ խմբաքանակի ֆինանսական ծավալը կազմում է 5411 ԱՄՆ դոլար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել ՀՀ Կրթության Գիտության Նախարարության, ՀՀ Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներկայացում Տիեզերքի Ուսումնասիրման և Զարգացման Եվրոպական Գրասենյակին (EOARD), ինչպես նաև Ծովային Ուսումնասիրման Գրասենյակի Նավատորմային Դեպարտամենտին (ONRG):<br>Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում՝ ՀՀ Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին: |

ԲԿՄՀՈՒԿ-ի տնօրեն Գ. Հայրապետյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ա.5/4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

01.04.11թ. № 3/3.8-1/77026-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.03.11թ. N 15/15.11/4540-11 գրության՝ կապված <<ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող <<Գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

01.04.11թ.

№ 034/9174-11

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա.5/4

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ press@moj.am*

05.04.11թ. № 01/1980-11

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 28-ի 15/15.11/4540-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «ՀՀ ԿԳՆ Բժշկակենսաբանական Միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա. Մարտիրոսյան հեռ.380.227**

05.04.11թ.

№ 035/9532-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ձր. 5/4

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

04.04.11թ. N ՆՔ/22/2577-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.03.2011թ. թիվ 15/15.11/4540-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության կրթության ագիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

04. 04. 11թ.
№ 020/9416-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER ձր. 5/4

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел 8 03 02, ֆաքս/факс
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/3777-11 "18" ապրիլ 2011

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն ՀՀ ԿԳՆ սույն թվականի ապրիլի 1-ի № 03/07-1/3094-11 գրության, հայտնում ենք, որ ծրագրի լրամշակումից հետո, «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության գիտության և նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝* *Մ.ՄԿՐՏՉՅԱՆ*

Կատ. Ն.Սահակյան
հեռ. 524777

№ 031/11116-11
18. 04. 11թ.

ԴՐ. 5/4

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«31» մարտ 2011թ. № 7/02.3/577-11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.28.2011 N 15/15. 11/4540-11 գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը նպատակահարմար է գտնում ՀՀ կրթության և գիտության նախարարության "Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն" ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագիրը որակել որպես բարեգործական:

Հարգանքով՝

Հ. Հակոբյան

Կատարող՝ Գ. Պողոսյան

Հեռ. 36-83-08

31.03.11թ.

№ 052/9014-11

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
## ՏԵՂԱԿԱԼ

Երևան - 1, Նալբանդյան փ. 104

ԴՐ. 5/4

№ 11/184 «04» 04 2011թ.

Օր. 1

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 28.03.2011թ. N15/15.11/4540 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

<<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության <<Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագրի մասին>> ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը դիտողություններ ու առաջարկություններ չունի:

...ԱՐՈՒԹՅԱՆ
Մուտք 053/9567
05 04 2011թ.

Հարգանքով՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀ**

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 543 991, Ֆաքս 543 997, E-mail: info@anra.am

No 02-Մ-18 30.03.2011թ. Մ.5/4

Ձեր No15/15. 11/4540-11 28.03. 2011թ.

[ Բարեգործական ծրագիրը բարեգործական որակելու մասին]

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն չի առարկում, որպեսզի ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական համաժողովի եւ տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագիրը որակվի որպես բարեգործական:

Առդիր՝ Հիմնավորում, 1 էջ:

Հարգանքով՝

Ա.Մարտիրոսյան

ՀՀ [illegible] ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
[illegible] 107/9088
Մուտք [illegible]
«31» 03 20[illegible]թ.

Ա.Ավետիսյան
581 654

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

28. 03. 11թ. Մ.5/4
№ 3/3-6/1741-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 28-ի համար 15/15.11/4540-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

28. 03. 11 թ.
№ 044/8568-11

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հր. 5/5

____ ապրիլի 2011 թվականի N Մ- - Ա
քաղ. Երևան

### ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԿՐՏԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-1/, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի-ի N, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի մարտի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/ 3-4/ եզրակացությունները, **ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող՝ 4.000.000 դրամ արժողությամբ «Մանուկներին հումանիտար օգնություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Մկրտական առաքելություն ընկերակցության կողմից Հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու հասցեով ստացված հումանիտար բեռը՝ նվերներ երեխաներին (վերմակներ, կոշիկներ, գրենական պիտույքներ և հիգիենայի պարագաներ՝ 207 տեղ, 6738.93 կգ ընդհանուր քաշով, 5.821.1 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1455 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ և 81 տեղ, 2522.17 կգ ընդհանուր քաշով, 2.178.9 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 545 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցուն՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ԼՂՀ և Արարատի, Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Լոռու մարզպետներին:

---

"ՏՎԵՔ ՈՒ ՊԻՏԻ ՏՐՎԻ ՁԵԶ"
Ղուկաս 6 : 38

*Հաստատված է Ե Հ Ա Մ Ք եկեղեցու բարեգործության կողմից*
*Ի դեմս Առեճապետ՝ Վ. Խաչատր...*
*14.03.2011 թ*

"Մանուկներին (մինչև 14 տարեկան) հումանիտար օգնություն":

## ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | Մեր նպատակն է մանուկներին հասանելի դարձնել գրենական պիտույքները, խաղալիքները և հիգիենայի պարագաները, որը ներկայիս գնաճի պայմաններում անմատչելի է դարձել: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը: | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի /ԱԱՀ/ վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. Բարերարը: | Ամերիկայի Ավետարանական Մկրտական Ընկերակցություն (BAPTIST MISSIONARY ASSOCIATION OF AMERICA 9219 SIBLEY HOLE ROAD LITTLE ROCK, ARKANSAS 72260 USA). |
| 4. Ծրագրի կատարողը: | Հայ Ավետարանական Մկրտական Քրիստոնյաների եկեղեցի Նար - Դոս 90 , Երևան 0018 Հայաստան ՀՎՀՀ 00420726: |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը: | ՀՀ Հայ Ավետարանական Մկրտական Քրիստոնյաների եկեղեցու անդամների մանուկներին, ՀՀ տարածքում գործող մանկատուն ինտերնատների մանուկներին, Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի անապահով ընտանիքների երեխաներին: Լեռնային Ղարաբաղի /Արցախի/ Հանրապետության Զոհված Ազատամարտիկների ընտանիքների երեխաներին, մանկական նախակրթական հատուկ նշանակության հաստատություններում: |
| 6. Ծրագրի բյուջեն: | 4 000 000 /չորս միլիոն/ դրամ: |
| 7. Բարեգործություն ստացողը: | Հայաստանի Հայ Ավետարանական Մկրտական Քրիստոնյաների եկեղեցու համայնքները՝ Արարատի մարզ, Արագածոտնի մարզ, Թավուշի մարզ, Վայոց ձոր, Արմավիրի մարզ, Շիրակի մարզ, Գեղարքունիկի մարզ, Կոտայքի մարզ, Սյունիքի մարզ, Լոռու մարզ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և Երևան:<br>Հայաստանի Հանրապետության տարածքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող մանկական ինտերնատ հիմնարկություններ, զոհված ազատամարտիկների ընտանիքներ, վատ տեսողություն ունեցող երեխաների դպրոցներ և<br>Հայաստանի Հայ Ավետարանական Մկրտական Քրիստոնյաների եկեղեցու հովանու տակ գործող մանուկների ամառային ստացիոնար ճամբար: |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը: | 2011 թվականի ապրիլի 1-ից – 2012 թվականի ապրիլի 1-ը: |
| 9. Միջոցառումների նկարագրությունը. | Հայաստանի Հայ Ավետարանական Մկրտական Քրիստոնյաներիեկեղեցու բոլոր |

Հր. 5/5

| | |
|---|---|
| ծավալը: | համայնքներում մանուկներին տրամադրվող նվերներ՝<br>Արարատ ք. ՀԱՄՔ Եկեղեցի 400 փաթեթ<br>Արևշատ գ. ՀԱՄՔ Եկեղեցի 400 փաթեթ<br>Շիրակի մարզի ՀԱՄՔ Եկեղեցի 500 փաթեթ<br>Գեղարքունիկի մարզ 200 փաթեթ<br>Տավուշի մարզ 200 փաթեթ<br>Արմավիրի մարզ 200 փաթեթ<br>Վայոց Ձորի մարզ 200 փաթեթ<br>Կոտայքի մարզի, Աբովյան ք. ՀԱՄՔ եկեղեցի 200 փաթեթ<br>Սյունիքի մարզ 200 փաթեթ<br>Լոռու մարզի, Վանաձորի և Ստեփանավանի ՀԱՄՔ եկեղեցիներ 400 փաթեթ<br>Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 1500 փաթեթ<br>Երևան քաղաքի ՀԱՄՔ Եկեղեցի 1500 փաթեթ<br>Սուրբ Ծննդյան տոնին նվիրված ցերեկույթների ժամանակ կատարվող երգերով, արտասանություններով, բեմադրություններով, տիկնիկային ներկայացումներով, խաղերով կազմակերպված միջոցառումներ:<br>• Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում գործող մանկատուն ինտերնատներ 150 փաթեթ,<br>• Վատ տեսողություն ունեցող երեխաների դպրոց 150 փաթեթ,<br>• ՀԱՄՔ եկեղեցիների մանուկների ամառային ճամբար 2011 թ, Հուլիս-Օգոստոս ամիսների ընթացքում 700 փաթեթ: |
| 10. Ձեռք բերվող ( ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը: | Ներմուծել մանուկների սպորտային կոշիկներ, սպորտային հագուստներ, սան հիգիենայի պարագաներ, սրբիչներ, մանուկների խաղալիքներ, գրենական պիտույքներ (մատիտներ, գրիչներ, գունավոր գրիչներ, տետրեր, ներկելու վրձիններ, ներկեր, նկարչական ալբոմներ, նասկիներ, ձեռնոցներ, գլխարկներ և այլն):<br>Նշված պիտույքները հավաքագրված փաթեթավորմամբ ճամբարների հանդեսների ժամանակ, մանկական ինտերնատ հիմնարկներում կազմակերպված հանդեսներում, ինչպես նաև ՀԱՄՔ եկեղեցիների համայնքներում, որպես նվերներ բաժանել 0–14 տարեկան երեխաներին: Անհրաժեշտ ֆինանսական միջոցները կկազմեն 4,000.000 դրամ: |
| 11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր: | Հայաստանի Հանրապետությունում բաշխման համար կատարվելիք տրանսպորտային միջոցների ծախսեր 160000 դրամ: |
| 12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ: | • ՀՀ կառավարման բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:<br>• ՀՀ մարզպետարաններ:<br>• ՀՀ քաղաքապետարաններ:<br>• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը: | Երեխաների մեջ միջոցառումների կազմակերպման և նվերների բաշխման հսկողությունը իրականացնելու նպատակով ստեղծել կառավարական, համայնքային ինչպես նաև եկեղեցական կենտրոնական և տեղական ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով, որը ծրագրի ողջ ընթացքի ժամանակ կկատարի հսկողի դեր միջոցառումների կազմակերպման գործընթացի և նվերների բաշխման համար:<br>Հանձնաժողովի կազմը՝<br>• ՀՀ կառավարության բարեգործական ծրագրեր համակարգման հանձնաժողովից 1 հոգի:<br>• Յուրաքանչյուր մարզպետարանից1 հոգի:<br>• Յուրաքանչյուր քաղաքապետարանից 1 հոգի:<br>• ՀԱՄՔ եկեղեցու ծառայողներից առանձին համայնքներում 1 հոգի:<br>• ԵՀԱՄՔ եկեղեցու հոգաբարձությունից1 հոգի:<br>• Հանձնաժողովների կողմից կատարված դիտարկումից հաշվետվությունները և ակտերը ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ՀՐ. 5/5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

16.03.2011թ. № 3/3.8-2/2516-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 15.03.2011թ. N15/15.8/3721-11 գրությամբ ներկայացված «Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկներին հումանիտար օգնություն» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք, սակայն առաջարկում ենք որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/7171-11
16.03.2011թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐ. 5/5

№ 01/1521-11
16.03.2011թ

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*էլ. փոստ press@moj.am*

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման հանձնաժողովի**
**նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. մարտի**
**15-ի 15/15.8/3721-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

«ԵՀԱՄՔ եկեղեցու հոգաբարձության կողմից իրականացվող «Մանուկներին (մինչև 14 տարեկան) հումանիտար օգնություն» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

**կատ.՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա. Մարտիրոսյան հեռ.380.227**

035/7288-11
16.03.2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ձր. 5/5

«17» Տարբ 2011 թ. N ՑԲ/ԱՀՏ-5/2031-11

Ձեր 2011-03-15, 15/15.8/3721-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկների հումանիտար օգնություն» ծրագրի մասին որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝ Ֆ. Բերիկյան

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.525-893

040/7418-11
17.03.2011թ

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ձր. 5/5

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N ԱԱ/3-4/1617-11
21.03.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.03.2011թ. թիվ 15/15.8/3721-11 գրությանը կից ներկայացված «Երևանի հայ ավետարանական մկրտական եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկներին հումանիտար օգնություն» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի 10-րդ կետում ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների արժեքները խիստ ընդհանրական են ներկայացված, որը հնարավորություն չի տալիս պատկերացում կազմել ծրագրով նախատեսված բյուջեի ծախսման վերաբերյալ: Ըստ ներկայացված բաշխվող փաթեթների քանակների և արժեքների՝ մեկ փաթեթի արժեքը, որի մեջ նախատեսված է հագուստ, կոշիկ, սրբիչ, հիգենայի պարագաներ, գրենական պիտույքներ՝ կազմելու է մոտ 550 դրամ: Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ եմ համարում ներմուծվելիք ապրանքների քանակները և արժեքները ներկայացնել մանրամասն, ինչպես նաև հիմնավորել մեկ փաթեթի արժեքը:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները հայտարարագրվում և մաքսային ձևակերպում են ստանում ըստ ԱՊՀ երկրների Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ): Վերջինիս միջոցով ապրանքների դասակարգման գործընթացը

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկներին հումանիտար օգնություն» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| - առաջարկում ենք նախագծի 3-րդ կետում ներառել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը | Դիտողությունը հաշվի է առնվել, նախագիծը լրամշակվել է |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Կից ներկայացված ծրագրի 10-րդ կետում ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների արժեքները խիստ ընդհանրական են ներկայացված, որը հնարավորություն չի տալիս պատկերացում կազմել ծրագրով նախատեսված բյուջեի ծախսման վերաբերյալ: Ըստ ներկայացված բաշխվող փաթեթների քանակների և արժեքների՝ մեկ փաթեթի արժեքը, որի մեջ նախատեսված է հագուստ, կոշիկ, սրբիչ, հիգենայի պարագաներ, գրենական պիտույքներ՝ կազմելու է մոտ 550 դրամ: Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ եմ համարում ներմուծվելիք ապրանքների քանակները և արժեքները ներկայացնել մանրամասն, ինչպես նաև հիմնավորել մեկ փաթեթի արժեքը:<br>Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները հայտարարագրվում և մաքսային ձևակերպվում են ստանում ըստ ԱՊՀ երկրների Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ): Վերջինիս միջոցով ապրանքների դասակարգման գործընթացը կանոնակարգվում է ԱՏԳ ԱԱ-ի մեկնաբանման հիմնական կանոններով և առանձին ապրանքային խմբերի ու դիրքերի պարզաբանումներով: Այդ կանոններով, մասնավորապես, նախատեսված է, որ խառնուրդներն ու բազմատարր ապրանքները պետք է դասակարգվեն խառնուրդի կամ բազմատարր ապրանքի հիմնական բաղադրիչի ծածկագրի ներքո, եթե հնարավոր է որոշել, թե որն է հիմնական բաղադրիչը: Տվյալ դեպքում եթե պայմանականորեն «փաթեթ» անվանվող իրերը ներմուծվելու են փաթեթավորված խառնուրդների տեսքով, ապա «փաթեթի» լրակազմի բաղադրիչներից որևէ մեկը չի կարող դիտարկվել որպես լրակազմի հիմնական բաղադրիչ, մանավանդ, որ դրանց պարունակությունները կարող են տարբեր լինել: Հետևաբար, անհնարին է դառնում ներմուծվող բեռների հայտարարագրման և մաքսային ձևակերպումների հետագա գործընթացը: | Ապրանքների արժեքները ներկայացված են ըստ հայտարարագրերի: |

կանոնակարգվում է ԱՏԳ ԱԱ-ի մեկնաբանման հիմնական կանոններով և առանձին ապրանքային խմբերի ու դիրքերի պարզաբանումներով: Այդ կանոններով, մասնավորապես, նախատեսված է, որ խառնուրդներն ու բազմատարր ապրանքները պետք է դասակարգվեն խառնուրդի կամ բազմատարր ապրանքի հիմնական բաղադրիչի ծածկագրի ներքո, եթե հնարավոր է որոշել, թե որն է հիմնական բաղադրիչը: Տվյալ դեպքում եթե պայմանականորեն «փաթեթ» անվանվող իրերը ներմուծվելու են փաթեթավորված խառնուրդների տեսքով, ապա «փաթեթի» լրակազմի բաղադրիչներից որևէ մեկը չի կարող դիտարկվել որպես լրակազմի հիմնական բաղադրիչ, մանավանդ, որ դրանց պարունակությունները կարող են տարբեր լինել: Հետևաբար, անհնարին է դառնում ներմուծվող բեռների հայտարարագրման և մաքսային ձևակերպումների հետագա գործընթացը:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/7858-11
21.03.2011թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2011 թվականի N Մ- -Ա** Մ.5/6.1

**քաղ. Երևան**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ուղարկված բեռի (153 տեղ, 2287 կգ ընդհանուր քաշով, 37580.01 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով՝ ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, բեռի ցակը կցվում է, Սյունիքի ՏՄ) ներմուծման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին հանձնելու ծրագիրը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՑԱՆԿ
բարերար Լևոն Հայրապետյանի կողմից ԼՂՀ սոցապահովության նախարարության հասցեով ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք համայնքի համար ուղարկված բեռի

Մ.5/6.1

| հ.հ. ը/կ | Ապրանքի անվանումը | Քանակը/տեղը | Արժեքը ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Սրճարանի սեղաններ ապակյա երեսամասով, մետ. հիմքով | 25 | 306843 |
| 2. | Սրճարանի բազկաթոռներ պոլիէթ. գործվածքով /փոքր/ | - | 38145 |
| 3. | Լամպեր էլեկտրաշիկացման 220վ. 25-ից 100 վատտ | 10 | 67049 |
| 4. | Աթոռներ մետ. հիմքով | 15 | 388112 |
| 5. | Սրճարանի բազկաթոռներ պոլիէթ. գործվածքով | - | 487692 |
| 6. | Բազկաթոռ մետ. հիմքով պլյաժնի /լեժանկա, մեծ/ | - | 381400 |
| 7. | Արևային լուսատուներ | - | 222721 |
| 8. | Ջրային դիսպենսեր՝ հեղուկ սառեցնող սարք ոչ էլ. | 5 | 21548 |
| 9. | Սրբիչ-ծածկոցներ | 15 | 975427 |
| 10. | Բարձեր բազմոցի | 10 | 123248 |
| 11. | Ջահեր կախովի | - | 314556 |
| 12. | Պատի ժամացույց | - | 32793 |
| 13. | Լոգարանի խալաթներ | 7 | 205242 |
| 14. | Խոհանոցային տախտակ | - | 54223 |
| 15. | Մետ. ցինկապատ խողովակ | - | 1203482 |
| 16. | Մետ. ցանց պլ. ծածկույթով | 52 | 611141 |
| 17. | Լվ. մեքենայի պոլիէթ. պարկեր | - | 1388244 |
| 18. | Փայտե սեղան մեծ /օրգանզայով/ | 2 | 439388 |
| 19. | Պլ. արձան՝ «մարդ կիթարով» | 1 | 112526 |
| 20. | Պատի նկարներ /ըստ հ/ա-ի/ | - | 1170901 |
| 21. | Արձաններ ոչ թանկարժեք մետաղներից բրոնզեպատ /ըստ հ/ա-ի/ | - | 1759880 |
| 22. | Արձաններ ոչ թանկարժեք մետաղներից բրոնզեպատ /ըստ հ/ա-ի/ | - | 616043 |
| 23. | Սեղանի կտորե սփռոցներ անձեռոցիկներով | 1 | 35621 |
| 24. | Լոգարանի մետ. կախիչներ | 4 | 33825 |
| 25. | Բյուրեղապակյա վազաներ /ըստ հ/ա-ի/ | - | 362307 |
| 26. | Փայտե սեղան աթոռներով | 2 | 132091 |
| 27. | Կերամիկական ափսեներ | - | 344030 |
| 28. | Էլ. ջահ | 4 | 516994 |
| 29. | Կերամիկական պարագաներ /ըստ հ/ա-ի/ | - | 1035983 |
| 30. | Գորգ բրդյա | - | 127385 |
| 31. | Հագուստներ և ապրանքներ օգտագործված այլ | | 238997 |
| | Ընդամենը | 153 | 13747837 |

ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության
աշխատակազմի բարեգործական ծրագրերի համակարգման
բաժնի պետի փոխարինող Ռ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Հր. 5/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

17.03.11 № 3/3.8-2/2846-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 14.03.2011թ. N15/15.1/3568-11 գրությամբ ներկայացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ նախագծին կից ներկայացված գրությամբ պարզաբանված չէ ստացված բեռներից ԼՂՀ-ի Մարտակերտի շրջանի Վանք համայնքին սրճարանային կահավորանքի հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը:

Միաժամանակ հայտնում ենք , որ ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացված որոշման նախագծի վերաբերյալ իր կարծիքը լրացուցիչ կհայտնի համապատասխան պարզաբանում ստանալուց հետո:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/7331-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Հր. 5/6.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

ԿԱ/3-6/1467-11
16.03.11

**ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 12-ի թիվ 15/15.1/3568-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, գրության մեջ չկա որևէ հիշատակում առ այն, թե ինչ նպատակով են օգտագործվելու ներմուծվող ապրանքները, մասնավորապես անհրաժեշտ է ներկայացնել սպառիչ հիմնավորումներ, որ ներմուծվող ապրանքները շահույթ ստանալու նպատակով չեն օգտագործվելու: Անհրաժեշտ է ներկայացնել նաև շահառուների ցանկ:

Ծրագրի բարեգործական որակելը նպատակահարմար ենք համարում վերը նշված պահանջները բավարարելուց հետո:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49*

044/7170-11

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

КОМИССИЯ ПРАВИТЕЛЬСТВА
НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ
ПО КООРДИНАЦИИ
БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ПРОГРАММ

CHARITABLE PROGRAMS COORDINATING
COMMISSION OF THE GOVERNMENT
OF THE NAGORNO-KARABAKH REPUBLIC

ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների փ. 54 հեռ. 94-53-64

«18» 04 2011թ. N 33/01-7

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի (2011թ. մարտի 16-ի թիվ ԱԱ/3-6/1467-11) և ՀՀ ֆինանսների նախարարության (2011թ. մարտի 17-ի թիվ 3/3.8-2/2546-11) կողմից Ձեզ ներկայացված գրությունների վերաբերյալ Ձեր բանավոր հարցման՝ կից Ձեզ ենք ուղարկում ԼՂՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարի եզրակացությունը և ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք համայնքի ղեկավարի հիմնավորումը՝ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից Արաբական Միացյալ էմիրությունների Դուբայ քաղաքից ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության հասցեով ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք համայնքի կարիքների համար ուղարկված բեռի՝ էլեկտրական և տնտեսական ապրանքներ, հուշանվերներ, տարբեր տեսակի ապրանքներ, վերաբերյալ:

Միաժամանակ նշում ենք, որ վերը նշված եզրակացության և հիմնավորման հետ լրիվությամբ համաձայն ենք:

Առդիր՝ 2 թերթ (եզրակացության և հիմնավորման պատճենները):

Հարգանքներով

Նախագահ՝ Ն. Ածատրյան

106/11338
20 04 2011թ.

---

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**НАГОРНО-КАРАБАХСКАЯ РЕСПУБЛИКА**

| ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄ | АДМИНИСТРАЦИЯ МАРДАКЕРТСКОГО РАЙОНА |
|---|---|
| ք. Մարտակերտ Ակ. Սախարովի փողոց, հեռ. 42 - 17 - 65 | г. Мардакерт Ул. Ак. Сахарова, тел. 42 - 17 - 65 |

№ 6-4/180 «09» 03 2011թ.

*ԼՂՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ տիկին Ն. Ածատրյանին*

*Ձեր 21.02.2011թ. թիվ 8 / 01-10*

*Հարգելի Նարինե Ալեքսանդրի*

Ի պատասխան՝ վերոնշյալ գրության, տեղեկացնում եմ, որ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից բարեգործական կարգով շրջանի Վանքի համայնքի համար ուղարկվող տնտեսական և էլեկտրական ապրանքները բարեգործական որակելու և գրանցելու համար տալիս ենք դրական եզրակացություն:

*Վարչակազմի ղեկավար* *Ժ.Ռ. Գաբրիելյան*

Կատարող՝ տնտեսական
զարգացման բաժին
հեռ. 42-18-90

ԼՂՀ
8/01/10
«12» 03 2011թ.

ԼՂՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահի տեղակալ պրն Լ. Ղուլյանին

Հարգելի պարոն Ղուլյան

Ի պատասխան Ձեր 2011թ. մարտի 22-ի թիվ 22ա/01-10 գրության, հայտնում ենք, որ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից Արաբական Միացյալ էմիրությունների Դուբայ քաղաքից ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության հասցեով ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք համայնքի կարիքների համար ուղարկված բեռը՝ էլեկտրական և տնտեսական ապրանքներ, հուշանվերներ, տարբեր տեսակի ապրանքներ, նպատակ ունի բարելավել տարածքը և զարգացնել համայնքի սոցիալական օբյեկտները (բոլոր հարմարանքներով և ժամանակակից պահանջներին համապատասխանող նորակառույց մանկապարտեզը, դպրոցը, հիվանդանոցը և դրանց հարակից տարածքները), ինչպես նաև բնակիչների կենցաղային պայմանները, քանի որ հենց այդտեղ է տեղակայված Արցախի մշակութային արժեքներից մեկը՝ հանրապետություն ժամանող բոլոր զբոսաշրջիկների ուշադրությունը գրավող Գանձասար եկեղեցին և պատմական ու մշակութային այլ հուշարձաններ:

Բեռի ցանկի 1,2,3,5.6,12,18,19,20,21,22,25,26,27,29-րդ տողերում նշված ապրանքները նախատեսված են դպրոցի (ճաշարանի, մեթոդական առանձնասենյակների և դասարանների), 10,14,23,24,28,30,31-րդը՝ մանկապարտեզի, 4,8,9,11,13,17-րդը՝ հիվանդանոցի (հիվանդների և սպասարկման անձնակազմի ), 7,15,16-րդը՝ համայնքի տարածքի բարեկարգման համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ բեռի ցանկում նշված ապրանքները շահույթ ստանալու նպատակով չեն օգտագործվելու:

Հարգանքներով՝

ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք համայնքի ղեկավար Ֆ. Օհանյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 17.03.11, N 3/3.8-2/2546-11 | |
| 1. Անհրաժեշտ է պարզաբանել ստացված ապրանքների օգտագործման կարգը և նպատակը | 1. Ներկայացված է նախարարության պարզաբանումը |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե – 16.03.11, N ԱԱ/3-4/1467-11 | |
| 1. Անհրաժեշտ է պարզաբանել ստացված ապրանքների օգտագործման կարգը և նպատակը | 1. Ներկայացված է նախարարության պարզաբանումը |

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— ապրիլի 2011 թվականի N Մ- -Ա

քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N 1/06/-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Միջազգային թենիսի ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի թենիսի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (35 տեղ, 209 կգ ընդհանուր քաշով, 50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1969.12 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի թենիսի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ձր.5/6.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.04.2011թ. № 3/3.8-ձ/77818-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.04.2011թ. N15/15.6/5858-11 գրությամբ ներկայացված «Հայաստանի թենիսի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/11467-11
21.04.2011թ

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---

ձր.5/6.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
**ՆԱԽԱՐԱՐ**

ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9
☎ 52-86-01
հեռապատճեն՝ 52-99-28, 52-88-77
էլ. փոստ՝ msy@msy.am

19 04 2011 թ. N 1/06/360-11
Ձեր 15 04 2011 թ. N 15/15.6/5858-11

*Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
Ս. Տեր-Սիմոնյանին*

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի թենիսի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առաջարկություններ և դիտողություններ չունի:

*Հարգանքով՝*

*Ա. Պետրոսյան*

Կատարող՝ սպորտի բարձրագույն նվաճումների
քաղաքականության վարչության
Ս. Հարությունյան
Հեռ.՝ 52-99-79

022/11215-11
19.04.2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**


0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7

Հեռ.


№ ԱԱ/3-6/2269-11
15.04.2011թ.

Մ. 5/6.2

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. ապրիլի 15-ի համար 15/15.6/5858-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի թենիսի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044/11014-11
15.04.2011թ.


*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*


*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**___ ապրիլի 2011 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

Մ. 5/6.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N ՀՔ/22/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (25 տեղ, 1138.97 կգ ընդհանուր քաշով, 334530 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5701.36 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ձր. 5/6.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

19.04.2011թ. № 3/3.8-2/77730-11

Ձեր № ______________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.04.2011թ. N15/15.6/5845-11 գրությամբ ներկայացված ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N3) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/11269-11
19.04.2011թ.

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ձր. 5/6.3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

20.04.2011թ. N ՆՔ/22/3165-11

Ձեր N ______________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.04.2011թ. թիվ 15/15.6/5845-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (3)» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

020/11354-11
20.04.2011թ.

ԿԱՏԱՐՈՂ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ
ՀԵՌԱԽՈՍ 52 27 21

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ ապրիլի 2011 թվականի N Մ - -Ա ԱՐ. 5/6.4
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N ՀՔ/22/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված 1500 սրվակ տուբերկուլոզի դեմ պատվաստանյութի (իր լուծիչով՝ 2 տեղ, 24 կգ ընդհանուր քաշով, 2070 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 237.48 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ԱՐ. 5/6.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
